տով 1 ր., Բաղկեցի հայ ոմն 1 ր., Տիգրան Կոնդախսազեանց 1 ր., Դարչոյ Առաքելով 1 ր., Արտեմ Հիրանով 1 ր., Ալէքսի Գալստեանց 1 ր., Հազարապետ Սուլխանեանց 1 ր., Յարութիւն Սագզեանց 1 ր., Աղէքսանդր Սուսանեանց 1 ր., Թադէոս Յակովբեանց 1 ր., Նաղ ժաֆ Շահայ օղլի տաճիկ 1 ր., Խ. Շախնազարեանց 1 ր., Ս. Գոլովթեանց 1 ր., Գ. Գերսեանց 1 ր., Ալէքսանդր Մուչկալով 1 ր., Միխէիլ Բեգիջանով 1 ր., Գրիգոր Բայանդուրով 1 ր., Ստեփան Գուլեանց 1 ր., Ստեփան Թումոնեանց 1 ր., Մելքոն Բաղդասարով 1 ր., Շալամով 1 ր., Միխակ Խօջափարուխով 1 ր., Դարչոյ Ղաւալով 1 ր., Զէյնալ տաճիկ 60 կ., Игнатій Микселодъ 50 կ., Николай Карахановъ 50 կ. և Ալէքսան Գեօզալով 1 ր.։

Սմբ. Պարսամեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Փետրվարի 19-ին, Թագաւոր Կայսրի Թագաւորութեան 25-ամեայ տարեդարձի օրը, ԹԻՖԼԻՍ քաղաքը տօնեց փառաւոր կերպով։ Քաղաքիս բոլոր եկեղեցիներում և Երևանեան հրապարակի վրա հանդիսաւոր կերպով եկեղեցական մաղթանքներ կատարվեցան բոլոր պաշտօնական անձանց և ահագին բազմութեան ներկայութեամբ, հայոց վանքի Մայր-եկեղեցումն էլ հանդիսաւոր պատարագից և մաղթանքներից յետոյ տեղիս հայ դպրոցների աշակերտներն ու աշակերտուհիները երգեցին «Տէր պահպանիր Կայսրին» ռուսաց ազգային հիմն հայերէն լեզուով։ Բոլոր փողոցները առաւօտից արդէն գոյնզգոյն դրօշակներով էին զարդարված, իսկ երեկոյեան ամբողջ քաղաքը շատ շքեղ կերպով լուսաւորված էր։ Չը նայելով, որ երեկոյեան անձրև սկսեց գալ, մինչև կէս գիշերը ահագին բազմութիւն զբօսնում էր բոլոր փողոցներում, բուլվարում և հրապարակական այգիում։

—

Մեզ գրում են ԲԱԳՈՒԻՑ։ «Բագուի հայոց Աղքատաց Բարեգործական ընկերութեան հոգաբարձութիւնը ներողութիւն է խնդրում այն բարերար անձերից, որոնք այս տարվայ Ծննդեան տօնին միմեանց այցելութիւն գնալու փոխարէն օժանդակութիւն արին յօգուտ աղքատաց և հոգաբարձութիւնը թէև պարտաւոր էր նուիրատուների ազգանունները տպագրել և տպագրված ցուցակը ամենքին բաժանել, բայց այդ նրան չյաջողվեց, որովհետև չը նայելով որ դիմեց մի քանի տպարաններին, դարձեալ չը կարողացաւ իր դիտաւորութիւնը կատարել։ Ընկերութիւնը յուսով է որ աչքի առաջ առնելով այսքան տարվայ նրա պարտաւորութիւնների ճիշդ կատարվիլը, պարոններ նուիրատուները չեն նեղանայ այս անգամ նրա այդ ակամայ անճշդութեան մասին»։

—

Այս օրերս հասաւ ԹԻՖԼԻՍ յայտնի ձեռնածու (ֆօկուսնիկ) պ. Կօզլօվ, որ յայտնի է ամբողջ Եւրոպայում։ Շատ լրագիրներում, թէ ռուսաց, թէ ֆրանսիական և թէ լեհական լրագիրներում մենք կարդում ենք պարոնի մասին գովասանքներ։ Ամեն տեղ վկայում են, որ պ. Կօզլօվ զարմանալի ճարպիկութեամբ անում է իր ֆօկուսները։ Նշանաւորն այն է, որ պ. Կօզլօվ իր ֆօկուսների մէջ երբէք ոչինչ մեքենաներ չէ գործ ածում, այլ իր բոլոր հրաշքները միմիայն ձեռքով է անում։

—

Ստացանք ԹԻՖԼԻՍԻ արական Պրօգիմնազիայի մի քանի աշակերտներից յօգուտ Թիւրքիայի հայ սովատանջների 10 ր. 25 կոպ.։ Ահա նուիրատու անձանց անունները։ Ծատուրեանց Տիգրան 4 ր., Աւագեանց Յովհաննէս 2 ր., Անտօնեանց Ռուբէն 1 ր. 20 կ., Կարալեան Զաքար 1 ր. 5 կ., Աղունակեան Վասիլ 1 ր., Բաղչեան Ալէքսանդր 1 ր., ընդամենը 10 ր. 25 կ.։

—

Ստացանք ԴԷՐԲԷՆԴԻՑ, պ. Շահնազարեան դէ Շափուրից հետևեալ նամակը։ «Անցեալ տարվայ «Մշակի» 61 համարում տպած նամակով խոստացել էի իւրաքանչիւր տարի տալ յօգուտ «Արարատեան» ընկերութեան 10 րուբլ։ Ուղարկելով ընդ սմին այդ փողը, խնդրեմ ներողութիւն կրէք տեղը հասցնելու»։

—

Ստացանք յօգուտ Վանի սովատանջների տիկին Ագապիա Ամիրխանեանցի ձեռքով հաւաքած 80 րուբլ։ Տիկիններ՝ Երուսալիմսկի տուել է 15 ր., Մօրրիսօն 25 ր., Աւագեանց 1 ր. 40 կ., Խատօն 6 ր., Քալ. 2 ր., Վար. 1 ր. 15 կ., Քաթանեան 1 ր. 50 կ., Ագ. Ա. 10 ր., պարոններ Շ. 1 ր. 15 կ., Հ. 1 ր., Համ. 1 ր., Էմ. 1 ր., Փիրա. 1 ր., Մգ. 3 ր., Վար. 1 ր., Ենօվք, Բաբուք և Նաթան Ամիրխանեանք 70 կոպ., Հայ-աւետարանականների Թիֆլիսի ժողովից կիրակի օրվայ հաւաքված 8 ր. 10 կոպ.։ Ընդամենը 80 րուբլ։

—

Ստացանք յօգուտ Թիւրքիայի հայ սովատանջների 100 րուբլ գանձակեցի Սարգիս, Սօլօմօն, Գրիգոր և Մկրտիչ Ափանոսեան եղբայրներից։

—

ԼԱԲԻՆՍԿԱՅԱ ստանիցա անուանված տեղից (Կուբանեան վիճակից), փետրվարի 8-ից մեզ գրում են։ «Այս տարի ցրտերը հասնում էին այդտեղ մինչև 30 աստիճան, որ երբէք եղած չէ։ Այդ կողմերը ցուրտը, առհասարակ, հասնում է մինչև 10 կամ 15 աստիճան։ Յունվարի 25-ին ալիւրի պուդը ծախվում էր 1 ր., 70 կ., բայց երբ ցուրտը դարձեալ սաստկացաւ և ջաղացները փակվեցան, ալիւրի գինը բարձրացաւ։ Փետրվարի 1-ից եղանակը մեղմացաւ և ջաղացները կրկին սկսեցին բանել, այնպէս որ ալիւրի պուդը դարձաւ 1 ր. 20 կ.։ Բայց փետրվարի 6-ից մինչև 8-ը ցուրտը դարձեալ այնքան սաստկացաւ, որ 30 աստիճանից էլ աւելի էր, այնպէս որ 5 սաժէնի խորութեամբ գտնված հորերի ջուրը սառեց։ Ոչ ոք մեր ծերերից այս տարվայ ձմեռվայ պէս ձմեռ չէ յիշում»։

—

Փետրվարի 18-ին ԹԻՖԼԻՍԻ ռուս դերասանները ներկայացրին ռուսերէն լեզուով Սունդուկեանցի «Պէպօ» պիէսան։

—

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են որ այդ քաղաքումն էլ մի քանի երիտասարդներ սկսեցին Թիւրքիայի հայ սովատանջների համար փող հաւաքել, բայց նուիրատուութիւնները այնքան առատ չեն։

—

Մեզ գրում են ԵՐԵՒԱՆԻՑ. «Պ. Սմբատ Սարգսեանի տանը նորերումս թատրօնական ժողով կար։ Ժողովը վճռեց շուտով մի ներկայացումն տալ յօգուտ Երևանի սովատանջների։ Խաղալու համար պ. Գ. Սունդուկեանի «Խաթաբալա» պիեսան ընտրվեցաւ։ Տեղիս ռուս թատրօնասէրները մտադիր են շուտով մի ներկայացումն տալ նոյն նպատակի համար»։

—

ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ մեզ գրում են. «Անցեալ օրերը գնացի հարսանիք վրացոց Քիլդա գիւղը։ Պսակելու ժամանակ պատառոտած շորերով մի քանի օրիորդներ և տղաներ երգում էին։ Իմ հարցին պատասխանեցին, որ դրանք գիւղի ուսումնարանի աշակերտուհիներ և աշակերտներն էին։ Միւս առաւօտը գնացի ուսումնարանը, որ գտնվում էր եկեղեցու մօտ գիւղի մի ծայրում։ Ուսումնարանը երկու դասատուն ունի, որտեղ խառը սովորում են 64 աշակերտուհիներ և աշակերտներ։ Այս առաջին երևոյթն է մեր մէջ, որ տղաները և աղջիկները միասին խառն են սովորում։ Ուսուցիչը յայտնեց, որ աղջիկները տղաներից աւելի լաւ են սովորում։ Ուսումնարանը հիմնել է և պահպանում է «Քրիստոնէութիւնը վերականգնող ընկերութիւնը Կովկասում»։ Ուսումնարանը ունի մի ուսուցիչ, մի կրօնուսոյց քահանայ և մի ուսուցչուհի։ Թէ ուսուցիչները և թէ ուսուցչուհին բարեխղճաբար են կատարում իրանց պաշտօնը։ Օրիորդների ծնողները նրանց համար մի ասեղ անգամ չեն գնում, այնպէս որ ուսուցչուհին իր գրպանից նրանց համար ձեռագործութեան գործիքները առնում է»։

—

Մեզ հաղորդում են ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ, որ այնտեղ պ. Վահրամեանի տանը յօգուտ Վանի սովալլուկների նուիրատուութեամբ հաւաքվեցաւ 91 ր.։ Ստորագրութիւնը շարունակվում է։ Այդ փողերը դեռ ևս մենք չենք ստացել։

—

Վանի հայ սովատանջներին մեր խմբագրութեան միջոցով ուղարկված 2000 րուբլ գումարը ստացվեցաւ Կ. Պօլսի մէջ, ինչպէս մեզ այնտեղից տեղեկացրին հեռագրով, և մեր խնդիրքին համեմատ այդ գումարը Վան կը հասցնվի։ Մի և նոյն ժամանակ Կ. Պօլսի մէջ կազմված «Բայազէթի, Ալաշկերտի, Վանի և այլ սովելոց խնամող կենտրոնական Մասնաժողովի» ատենապետ պ. Սերովբէ Կիւլպէնկեան տեղեկացնում է մեզ, որ մենք մեր բոլոր հաւաքած նուէրները յօգուտ սովատանջների կարող ենք ուղղակի հասցնել այդ կենտրոնական մասնաժողովի վարչութեանը, որ կը կարգադրի ստացած փողերը Հայաստանի այլ և այլ տեղերում պահանջմանը համեմատ։

—

Ահա ինչ անձինքներից է բաղկացած «Սովելոց խնամատու կենտրոնական Մասնաժողովը» Կ. Պօլսի մէջ. Առաջին ատենապետ Մ. Սերովբէ Կիւլպէնկեան, երկրորդ ատենապետ Սահակ Ղազարոսեան, գանձապետ Արէլ Կիւլպէնկեան, համարակալ Գառնիկ Յովակիմեան, առաջին ատենադպիր Պօղոս Թ. Շաշեան և երկրորդ ատենադպիր Գաբրիէլ Նորատունկեան։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 19 փետրվարի։ «Правит. Вѣстн.» լրագրում տպված է Վիլհէլմ կայսրի ռուսաց Կայսրին ուղարկած նամակը։ Վիլհէլմ յայտնում է, թէ այն բարեկամութիւնը, որ կապում էր նրանց հանդերձեալը վերափոխված ծնողներին միմեանց հետ, ներկայ յարաբերութիւնների մէջ էլ պահպանվում է երկու միահեծանների մէջ։ Վիլհէլմ վստահութիւն է յայտնում, որ այս բարեկամութիւնն անփոփոխ կը շարունակվի մինչև նրա կեանքի վերջին օրերը։ Հրատարակված է սենատի ուկազը, որի հիման վրա ամենողորմաբար ներվում են, նայելով դասաւորութիւններին, մասամբ կամ ամբողջապէս զանազան տուգանքներ, ապառիկներ, հարկեր ու տուրքեր։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 18 փետրվարի։ Պետական բանկի 5% տոմսակն առաջին շրջանի արժէ 94 ր. 12 կ., երկրորդ 93 ր. 25 կ., երրորդ 93 ր. 50 կ., չորրորդ 93 ր., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակն արժէ 227 ր., երկրորդ 227 ր., արևելեան առաջին փոխառութեան տոմսակն արժէ 90 ր. 25 կ., երկրորդ 90 ր. 75 կ., երրորդ 90 ր. 37 կ., —ոսկին 7 ր. 72 կ.։ Ռուսաց 1 րուբլ Լօնդօնի վրա արժէ 25,43 պէնս. ռուսաց 100 րուբլ Բերլինի վրա արժէ 228 մարկ 25 պֆ., Համբուրգի վրա—216 մարկ 50 պֆէնինգ, Փարիզի վրա 267 ֆրանկ 25 անտիմ։

խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

դէմ մի այնպիսի յանդուգն քայլ անելու համար, ինչպէս արել է Ալէկին, հարկաւոր է աւելի մեծ բարոյական ոյժ, բարոյական մի իդէալ, բարոյական մի նպատակ ունենալ կեանքի մէջ։ Բարձր կամ այդպէս անուանված լաւ հասարակութեան մի ներկայացուցիչ, ինչպէս Ալէկին, չէ կարող իր կապերը կտրել իր առաջվայ հասարակութեան հետ, չէ կարող իր յարաբերութիւնները կտրել հասարակական աւանդութիւնների հետ, չէ կարող դիմանալ ամբողջ հասարակութեան դէմ ապարդիւն կռւին։

Երկուսից մին՝ կամ Ալէկին պէտք է լինէր կեանքի մէջ մտաւոր մի նպատակ ունեցող մի անձն, որ կարող է մենակ դիմանալ իր դէմ յարուցված ամբողջ հասարակութեան կողմից պատերազմին, որովհետև մտաւոր նպատակ ունեցող մարդը հեշտութեամբ կարող է անտես անել ներկան, իր ամբողջ ուշք ու միտքը, իր ամբողջ ձգտումները ուղղելով դէպի ապագան....կամ նա պէտք է բոլորովին հրաժարվէր հասարակութիւնից։

Մարդը որ իր գործունէութեան հետևանքը ապագայից է սպասում, կարող է հեշտութեամբ ուշադրութիւն չը դարձնել ներկայ սերունդի հալածանքների վրա, անտես անել իր ժամանակակիցների ատելութիւնը, նրանց կատաղութիւնը կամ արհամարհանքը....

Ալէկին արաւ մի յանդուգն քայլ, վիրաւորեց ամբողջ հասարակութիւնը, դարձաւ նրա խաղաղ և սովորական ընթացքի դէմ մի կենդանի բողոք, բայց չը կարողացաւ շարունակել սկսած կռիւը, ենթարկվեցաւ իրան ճնշող արհամարհանքին, և խոստովանելով որ իր ոյժերից վեր գործ է սկսել, կէս ճանապարհի վրա հրաժարվում է իր արած քայլից, իր յանձն առած գործից, հրաժարվում է ամբողջ հասարակութեան դէմ մարտնչելուց։

Ալէկին պաշտօնեայ է պետական ծառայութեան մէջ։ Նա կապված է մնացել իր բարոյական ամբողջ էութեամբ, իր բոլոր համակրութիւններով, իր ձգտումներով այն շրջանի հետ, որից բաժանվել է և որի դէմ իրան թոյլ է տուել բողոքելու։

Նա գուցէ կը դիմանար հալածանքներին, կը կարողանար պատերազմից յաղթող դուրս գալ, եթէ ուրիշ պարապմունք, ուրիշ կոչում ունենար հասարակութեան մէջ, եթէ նա աշխատէր ոչ թէ ժամանակակիցների, այլ ապագայ սերունդի համար, եթէ նա, օրինակի համար, լինէր գրող, բանաստեղծ, երաժիշտ, պուբլիցիստ, կամ նկարիչ....

Բայց դրա համար և կինը, որին նա սիրում է, պէտք է լինէր մտաւորապէս աւելի զարգացած, որպէս զի կարողանար իր մարդու հետ ձեռք ձեռքի տուած ընթանալ նրա բարոյական ձգտումների մէջ....

Կօնդօրօվա մի բարի, հասարակ աղջիկ է. Նա ուրախ և անկարգ կեանք անցնելուց յետոյ, ճշմարիտ սիրել է մի մարդուն, ամբողջ սրտով նրան նուիրված է, ամբողջ կեանքի նպատակը միայն այդ սիրոյ մէջն է տեսնում, գրեթէ մօր քնքոյշ սիրով հոգում է իր ամուսնու մասին. . . . Նրա սիրտը հանգստութիւն և համեստ կեանք է պահանջում, նա պատրաստ է հրաժարվել ամբողջ աշխարհից, միայն որ իր սիրածի, իր սրտի ընտրվածի հետ, աշխարհից յետ քաշված, հասարակութեան աչքից հեռու, գիւղական կեանքով ապրի....

Ուրիշ որ և է իդէալ Նադէժդա Պավլօվնայի պէս մի հասարակ աղջիկ չէ էլ կարող ունենալ, —բայց այդ տեսակ իդէալ, Ալէկինին, մայրաքաղաքի բարձր ծառայողների շրջանի այդ փայլուն հերոսին, չէ կարող գոհացնել, ի հարկէ....

Մի մարդ, որ համարձակվում է ամբողջ մի հասարակութեան դէմ բողոքել, պէտք է կարողանայ երկուսից մէկն անել՝ կամ նա պէտք է այնքան ոյժ ունենայ, որ պատերազմի ամբողջ հասարակութեան դէմ, կամ պէտք է բոլորովին փախչի հասարակութենից, քաղաքների աղմկալի կեանքից և յետ քաշվի գիւղական համեստ և հանդարտ կեանքի մէջ։

Բայց Պօտէխինի պիէսայի հերոսը առաջինն անելու համար բարոյական բաւական ոյժ չունի, իսկ երկրորդ տեսակի կեանք վարելը նա երբէք չի համաձայնվի, չը կարողանալով իր շրջանի աւանդութիւնների, իր երիտասարդական սովորութիւնների, իր շրջանի բարք ու վարքերի, ճաշակների հետ բոլոր իր առաջվայ կապերը կտրել....

Նրան մնում է միայն փոշմանվել, զղջալ հասարակութեան դէմ իր արած քայլի մասին, և խոստովանվել որ իրան պէս մարդիկների գործ չէ հասարակութեան դէմ բողոքել և որ իր յանդուգն քայլն անելով, նա իր ոյժերից վեր մի բեռ է շալակել իր տկար ուսերի վրա։

Նայենք այժմ Պօտէխինի պիէսայի վրա և մի ուրիշ տեսակէտից։

Երևակայեցէք ձեզ որ մի լողորդ խեղդվում է ջրի մէջ։ Ափի վրա գտնված մարդիկ փոխանակ գնելու, օգնութեան ձեռք մեկնելու խեղդվողին, հէնց որ նա հասնում է ափին, կրկին յետ են մղում նրան ափից, չը թոյլ տալով նրան փրկվելու և կրկին յետ են գցում նրան ջրի մէջ....

Գրեթէ այս ձևով է վարվում հասարակութիւնը ընկած մարդու կամ կնոջ հետ, որոնք մոլորված լինելուց յետոյ, կրկին ցանկանում են մտնել կեանքի ուղիղ և բարոյական ճանապարհի մէջ։

Նադէժդա Պավլօվնա սիրեց անկեղծ սիրով և այդ սիրոյ զգացմունքի շնորհով ընկած կնոջից նա դարձել է բարոյական և օրինաւոր կին։ Կարծում էք որ հասարակութիւնը նրան ձեռք կը մեկնի, կօգնի նրան վեր կենալ, բարոյական ճանապարհի վրա կանգնել, —ոչ, նրան ոչ մի տեղ չեն ընդունում, ամեն մարդ նրանից իր երեսը դարձնում է, ոչ ոք իր ձեռքը չէ մեկնում նրան....Նրան կրկին յետ են մղում այն անբարոյական շրջանը, որտեղից նա դուրս է եկել, նրան մերժում են, չեն թոյլ տալիս որ ուղղվի, չեն էլ հաւատում որ ընկած մարդկային էակը կարող է ուղղվել։

Մի գող, կամ բարոյապէս մի ընկած մարդ, խելքի է եկել, նրա մէջ զարթել է խղճմտանքը, նա կեանքի այս կամ այն հանգամանքների շնորհով կամենում է այսուհետև թողնել իր անցեալ կեանքի եղանակը, կամենում է ուղղվել, կամենում է օրինաւոր մարդ դառնալ, —բայց հասարակութիւնը, փոխանակ նրան պահպանելու, նրան աջակցելու իր բարի դիտաւորութիւնների մէջ, զզուանքով և հպարտութեամբ իրանից յետ է մղում զղջացող մարդուն։

Յայտնի է որ եւրոպական բոլոր մայրաքաղաքներում բարձր դասակարգի կանայք հիմնած ունեն բարեգործական ընկերութիւններ, որոնց նպատակն է նիւթապէս, մտաւորապէս և բարոյապէս օգնութիւն հասցնել ընկած կանանց, որպէս զի նրանց դուրս բերեն անբարոյականութենից, բայց երբ մի կին սիրոյ զգացմունքի շնորհով կամենում է ուղղվել, —հասարակութիւնը նրան իր շրջանի մէջ չէ ընդունում, որպէս ժանտախտով վարակված մի էակ և ստիպում է նրան կրկին վերադառնալ այն անբարոյական շրջանը, որտեղից յանդգնել է դուրս գալ։

Եթէ մի կողմից երիտասարդ Ալէկինի տխուր վերաբերութեամբ Պօտէխինի պիէսան յարմար կը լինէր անուանել «Ոյժից վեր մի բեռ», ուրիշ կողմից հասարակութեան ցոյց տուած փոքրոգութիւնը դէպի միմեանց սիրող երկու երիտասարդները, կատարեալ իրաւունք է տալիս հեղինակին անուանել իր պիէսան «Հոգով աղքատներ»։

Գ. Ա.